# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԻԼԻԹ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

3108, Գյումրի, Վ. Սարգսյան 20

Գյումրի համայնքի ղեկավար՝

պրն. Ս.Մ. Բալասանյանին

«Լիլիթ» ՀՈԱԿ-ի տնօրեն

Սուսաննա Ջվակերյանից

Հարգելի պրն Բալասանյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ գյուղնախարարության սննդի անվտանգության պետական ծառայության պետ՝ Ի. Կարապետյանի կողմից 2017թ-ի հոկտեմբերի 4-ին կայացվել է որոշում «Լիլիթ» ՀՈԱԿ-ի արտադրական գործունեությունը կասեցնելու մասին:

Կից ներկայացնում եմ որոշման կրկնօրինակը և խնդրում եմ որոշման մեջ արձանագրված թերությունները վերացնելու նպատակով՝ ցուցաբերել ֆինանսական անհրաժեշտ օգնություն:

Կից ներկայացնում եմ կատարվող աշխատանքների նախահաշիվը:

Տնօրեն՝ Ս. Ջվակերյան

18 10 2017թ.
15183

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԻԼԻԹ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

3108, Գյումրի, Վ. Սարգսյան 20

# Խոհանոցային հատվածի վերանորոգման նախահաշիվ

1. Նյութածախս

հազ. դրամ

| հ/հ | Օգտագործվող նյութի անվանումը | Չափման միավոր | Միավորի գին | Քանակ | Ընդամենը արժեք |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մալուխ ԱՎՎԳ 4 + 16 | մետր | 650 | 200 | 130000 |
| 2 | Մալուխ ԱՎՎԳ 2 + 16 | մետր | 250 | 100 | 25000 |
| 3 | Տափողակ 6·20 | հատ | 5 | 10 | 60 |
| 4 | Պտուտակ 6·40 | հատ | 5.8 | 60 | 420 |
| 5 | Անցում 20·20 | հատ | 25 | 29 | 870 |
| 6 | Եռաբաշխիչ 20·20·20 | հատ | 41.6 | 10 | 500 |
| 7 | Անկյունակ 20·90 | հատ | 33.3334 | 10 | 400 |
| 8 | Ֆու մեծ | հատ | 266.6 | 1 | 320 |
| 9 | Ամրակ 20 | հատ | 16.6 | 20 | 400 |
| 10 | Անցում 20·1/2 | հատ | 575 | 6 | 4140 |
| 11 | Սոսինձ ПВА | հատ | 416.6 | 1 | 500 |
| 12 | Ունիվերսալ կոլեռ | հատ | 250 | 1 | 300 |
| 13 | Մաստիտ | հատ | 25 | 3 | 90 |
| 14 | Սալիկ | քմ | 3500 | 21.42 | 89964 |
| 15 | Պտուտակ սև 3,5·25 | հատ | 2.5 | 400 | 1200 |
| 16 | Պտուտակ տափ սուր 4.2·13 | հատ | 2.5 | 150 | 450 |
| 17 | Պտուտակ խփովի | հատ | 5.8 | 60 | 420 |
| 18 | Գիպսակարդոնի պրոֆիլ | հատ | 500 | 4 | 2400 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19 | Գիպսակարդոնի պրոֆիլ Բ 47 | հատ | 566.6 | 4 | 2720 |
| 20 | Ջրաներկի Color | հատ | 6083.3 | 1 | 7300 |
| 21 | Վրձին | հատ | | 1 | 320 |
| 22 | Գլանակ | հատ | 1375 | 1 | 1650 |
| 23 | Հղկաթուղթ P15 | մ | 708.3 | 0.5 | 425 |
| 24 | Ներկ Conorika սպիտակ 2.7կգ | հատ | 2416.6 | 1 | 2900 |
| 25 | Ճաքի սկոչ | հատ | 250 | 1 | 300 |
| 26 | Ակրիլ գրունտ | հատ | 1083.3 | 1 | 1300 |
| 27 | Գիպսային ծեփամածիկ | հատ | 1333.3 | 1 | 1600 |
| 28 | Սալիկի սոսինձ 25 կգ | հատ | 1250 | 5 | 7500 |
| 29 | Քահարթիչ Ceresit | հատ | 1291.6 | 1 | 1550 |
| 30 | Գիպսակարդոն ռուսական | հատ | 2125 | 4 | 10200 |
| 31 | Վրձին Պետրովիչ | հատ | 167.5 | 1 | 201.07 |

Ընդամենը՝ 295.400

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

04 հոկտեմբերիի 2017թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանս, ուսումնասիրելով «Գյումրի համայնքի Լիլիթ» ՀՈԱԿ-ի վերաբերյալ հարուցված վարչական վարույթի նյութերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝**

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 674-17 հանձնարարագրի համաձայն «Գյումրի համայնքի Լիլիթ» ՀՈԱԿ-ում իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ խոհանոցի, հատակը, պատերը, առաստաղը չեն եղել նորոգ վիճակում, կենցաղային տարածքները չեն գտնվել նորոգ վիճակում, լվացարանները ապահովված չեն եղել հոսող ջրով, սննդամթերքի պահպանումը իրականացվել է սննդամթերքի համար չնախատեսված տարրաներում, սննդի ապահովումը կազմակերպված չի եղել խմբասենյակներում, որտեղ էլ հատկացված տարածքում իրականացվել է սպասքի լվացումը և պահպանումը, խմբասենյակների լվացարանները ապահովված չեն եղել տաք և սառը ջրով:

Խախտվել են ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 25-րդ, 26-րդ, 27-րդ և 58-րդ կետերի պահանջները:

Համաձայն «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի՝ 2-րդ և 3-րդ մասերի վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինն իրավունք ունի խախտումը հայտնաբերած տեսուչի եզրակացության հիման վրա կասեցնել տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 25-րդ հոդվածով և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝**

1. Կասեցնել «Գյումրի համայնքի Լիլիթ» ՀՈԱԿ-ի արտադրական գործունեությունը, մինչև հայտնաբերված խախտումները վերացնելը:

2. Հանձնարարել «Գյումրի համայնքի Լիլիթ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սուսաննա Զվակերյանին՝

1) արտադրամասում կազմակերպել սանիտարական օր, ախտահանել արտադրական, պահեստային սարքավորումները և տարածքները.

2) սննդի կառույցները պահել մաքուր, նորոգ և պատշաճ վիճակում.

3) ձեռքերի լվացման համար նախատեսել հարմար տեղակայված բավարար քանակությամբ լվացարաններով՝ ապահոված տաք և սառը ջրով, ձեռքերի լվացման ու ախտահանման միջոցներով և չորացման հիգիենիկ սարքերով: Ձեռքերի և հումքի լվացման լվացարանները տեղակայել առանձին և իրարից հնարավորինս հեռավորության վրա.

4) ապահովել, որ հատակը ունենա հարթ մակերես, պահվի նորոգ վիճակում, հեշտորեն մաքրվի ու ախտահանվի և պատրաստված լինի անջրանցիկ, չներծծող, լվացվող և ոչ թունավոր նյութերից,

5) ապահովել, որ պատուհաններն ու այլ բացվածքներ պատրաստված լինեն այնպես, որ կանխեն կեղտի կուտակումը: Դեպի դուրս բացվող պատուհաններն ունենան հեշտությամբ բացվող և մաքրվող միջատապաշտպան ցանցեր,

6) ապահովել, որ առաստաղը և վերին ամրությունները նախագծված և կառուցված լինեն այնպես, որ կանխարգելվի կամ նվազեցվի կեղտի կուտակումը, գոլորշու խտացումը, անցանկալի բորբոսների աճը և մասնիկների թափվելու հնարավորությունը.

7) սննդի շղթայի բոլոր փուլերում պետք է ապահովել սննդամթերքի պաշտպանվածությունը ցանկացած աղտոտումից:

3. Խախտումների վերացման կատարման ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 4-ը:

4. Սույն որոշման կատարման մասին տեղեկացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը մինչև 2017 թվականի դեկտեմբերի 6-ը:

5. Սույն որոշումը սահմանված ժամկետում չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին և (կամ) վերադասության կարգով կամ ՀՀ վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:

**ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝**

????? ??????????

**Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Կ.Տ